# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԱՐՍԼԱՆՅԱՆՆԵՐԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՍԼԱՆԵԱՆ, ՈՐ Ի ԲԵՅՐՈՒԹ, ԼԻԲԱՆԱՆ

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ վերստին խնդագին գոհունակութեամբ անդրադառնում Ձեր եկեղեցաշէն ու ազգօգուտ գործունէութեանը։

Սիրելի Տէր եւ Տիկին Արսլանեաններ,

Ուրախ ենք մեծապէս, որ Ձեր կեանքն արդիւնաւորում էք հարազատ ժողովրդին ու Մայր Եկեղեցուն մատուցած Աստուածահաճոյ բազում ծառայութիւններով։ Տասնամեակներ շարունակ, որպէս պատուարժան անդամ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Դուք հոգեւոր ու նիւթական Ձեր կարողութիւնները սիրառատ ոգով ի սպաս էք դնում ազգային եւ եկեղեցական մեր կեանքի շինութեանն ու զօրացմանը, սրբազան մեր արժէքների անխաթար պահպանմանն ու զարգացմանը։

Բարեգործի Ձեր անունը առյաւէտ կապուած է հայրենի մեր երկրի Ազատան գիւղի Սուրբ Յարութիւն եկեղեցուն, որի նորոգութեան աշխատանքները տարիներ առաջ կատարուեցին Ձեր ազնիւ հովանաւորութեամբ։ Այսօր արդեն նորոգուած սրբավայրի լուսաւոր կամարների ներքոյ հաւատաւոր հայորդիները իրենց աղօթքն են առ Աստուած բարձրացնում, հաղորդուում Աստուածային սուրբ խորհուրդներին եւ արժանանում երկնապարգեւ շնորհների՝ երախտագիտութեամբ Տիրոջ օրհնութիւնը հայցելով Ձեր բարի գործերին։

Ի գնահատումն Մայր Եկեղեցուն մատուցած Ձեր անսակարկ ծառայութեանց, յղում ենք Ձեզ Մեր սէրն ու բարեմաղթանքները եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

# ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մեր ամենաջերմ աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ ի խորոց սրտի մաղթում, որ Տէրը Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ մշտապէս առաջնորդի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաշէն գործոց նորանոր յաջողութիւններ:

*«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն»:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 7-ն Յունիսի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 92